



2022 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ICNL
INTERNATIONAL CENTER
FOR NOT-FOR-PROFIT LAW



2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հայաստան

Սեպտեմբեր 2023

Մշակված է՝

ԱՄՆ Միջազգային զարգացման
գործակալություն

Ժողովրդավարության, կոնֆլիկտի և
մարդասիրական աջակցության բյուրո

Ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման գերազանցության
Կենտրոն

Ծանուցում. Այս հրապարակումը հնարավոր եղավ Միացյալ Նահանգների միջազգային
զարգացման գործակալության (USAID) կողմից տրամադրված աջակցության միջոցով՝ AID-
OAA-LA-17-00003 համագործակցության համաձայնագրով:

Ծանուցում. Սույն փաստաթղթում արտահայտված կարծիքները քննարկման մասնակիցների
ու ծրագրում ներգրավված այլ հետազոտողների կարծիքներն են և պարտադիր չէ, որ
արտացոլեն USAID-ի կամ FHI 360-ի դիրքորոշումը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Այս գեկույցի հրապարակումը հնարավոր չէր լինի առանց բազմաթիվ անհատների և կազմակերպությունների ներդրման: Մենք հատկապես երախտապարտ ենք մեր գործընկերներին, ովքեր առանցքային դեր ունեցան փորձագիտական քննարկումների կազմակերպման և հաշվետվությունները կազմելու գործում: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել ԶՀԿ-ների ներկայացուցիչներին և փորձագետներին, ԱՄՆ ՄՉԳ-ի գործընկերներին և միջազգային դոնորներին, ովքեր մասնակցեցին յուրաքանչյուր երկրում անցկացված փորձագիտական քննարկումներին: Այս ինդեքսը ձևավորվել է նրանց գիտելիքների, ընկալումների, գաղափարների, դիտարկումների և ներդրման շնորհիվ:

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Անահիտ Հակոբյան

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

FHI 360

Դեյվիդ Լենեթ
Ալեքս Նեջադյան


ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կատարին Շեա
Ջեննիֆեր Սթյուարտ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Էրին Մաքքարթի, Դեյվիդ Լենեթ, Ջեննիֆեր Սթյուարտ, Իրինա Լաշխի

ՔՐԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 3.6



Հայաստանը շարունակում է դիմակայել անվտանգության մարտահրավերներին՝ 2020 թվականին Արցախի Հանրապետության տարածքում (Լեռնային Ղարաբաղ) Ադրբեջանի հետ պատերազմում կրած պարտությունից հետո: Չնայած զինադադարի վերաբերյալ համաձայնագրին՝ 2022 թվականին հայ-ադրբեջանական սահմանում իրավիճակը մնում է անկայուն: Բախումներն առավել ինտենսիվ բնույթ են ստանում ամռանը, իսկ սեպտեմբերին Ադրբեջանն իրականացնում է ռազմական ներխուժում Հայաստանի Հանրապետության տարածք, որի արդյունքում սպանվում է մոտ 200 հայ և 80 ադրբեջանցի զինվոր, և տեղահանվում մոտ 7600 խաղաղ բնակիչ: Դեկտեմբերին Ադրբեջանի մի շարք քաղաքացիներ շրջափակում են Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող Լաչինի միջանցքը՝ խոչընդոտելով Լեռնային Ղարաբաղի 120,000 բնակիչներին առաջին անհրաժեշտության սննդամթերքի ու բժշկական պարագաների մատակարարմանը և խորացնելով հումանիտար ճգնաժամը տարածաշրջանում:

Ապրիլից մինչև հունիս ընկած ժամանակահատվածում ընդդիմությունը կազմակերպում է զանգվածային բողոքի ցույցեր՝ պահանջելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը՝ պատերազմի ելքի պատճառով: Ոստիկանությունը բերման է ենթարկում բազմաթիվ ցուցարարների: Բերման ենթարկվածների թվում էր «Repat Armenia» հիմնադրամի խորհրդի անդամ Ավետիք Չալաբյանը: Վերջինս մեղադրվում էր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողական խորհրդի նախագահին կաշառելու փորձի մեջ, որի նպատակն էր մոբիլիզացնել ուսանողներին՝ ցույցերին մասնակցելու համար: Չալաբյանը մեկ ամիս մնում է կալանքի տակ՝ մինչև գրավի դիմաց ազատ արձակվելը:

2022 թվականի փետրվարի 24-ին Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժելուց հետո ավելի քան 1 միլիոն ՌԴ քաղաքացիներ են մուտք գործում Հայաստան՝ բերելով կապիտալի մեծ ներհոսք, ինչը բարելավում է երկրի մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշները: Ըստ Կենտրոնական բանկի տվյալների՝ 2022 թվականին Հայաստանում բանկերը [գրանցում](#) են աննախադեպ՝ շուրջ 2,5 մլրդ դոլարի տրանսֆերտների զուտ ներհոսք, որոնց 70 տոկոսը ստացվել է Ռուսաստանից: Ռուս միգրանտները մեծապես նպաստում են ներքին սպառման աճին, ինչը խթանում է սպասարկման ոլորտի ընդլայնումն ու համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը: Fitch Ratings-ի գնահատմամբ՝ 2022 թվականին Հայաստանի տնտեսությունն, ընդհանուր առմամբ, աճել է 11,6 տոկոսով, ինչը տասնհինգ տարվա առավելագույն ցուցանիշն է: Եշված միտումները հանգեցնում են ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի արժեւորման՝ 2022 թվականի առաջին կիսամյակում՝ 15,7 տոկոսով, և երկրորդ կիսամյակում՝ 3,5 տոկոսով: Արդարադատության նախարարության իրավաբանական

անձանց պետական ռեզիստրի գործակալության տվյալների համաձայն՝ 2022 թվականին ՌԴ քաղաքացիները Հայաստանում գրանցել են 2284 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) և 4968 անհատ ձեռնարկատեր:


Երկրորդ տարին անընդմեջ Հայաստանը Freedom House-ի 2022 թվականի Nations in Transit զեկույցում գնահատվում է որպես անցումային շրջանի կառավարություն կամ հիբրիդային ռեժիմ՝ պահպանելով բարելավման միտումը՝ Նախորդ տարիների կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմի համեմատ: Չեկույցում կարևորվել են քրեական լրագրողական հետաքննությունները, քաղաքական բարեփոխումները, ինչպես նաև լրատվամիջոցների կողմից տեղեկատվության հասանելիությունը ստանալու հետ կապված հաջողված դատական գործերը:

Քաղաքացիական հասարակության սեկտորի ընդհանուր կայունությունը 2022 թվականի ընթացքում մնում է անփոփոխ: Շարունակվում է թուլացման միտումը շահերի պաշտպանության առումով, քանի որ անկայուն քաղաքական իրավիճակը և ազգային անվտանգության մարտահրավերները կազմակերպություններին մղում են ինքնագրաքննության ու կառավարությանը քննադատելու հարցում խուսափողական դիրքորոշման: Կայունության մյուս բոլոր չափումների մասով փոփոխություններ չեն գրանցվել:

Արդարադատության նախարարության Էլեկտրոնային ռեզիստրի համաձայն՝ 2022 թվականին Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպությունների թիվը 2021-ին գրանցված 5659-ից հասնում է 6079-ի, իսկ հիմնադրամների թիվը՝ 2021-ին գրանցված 1476-ից՝ 1601-ի: Այդուհանդերձ, նշված թվերը ներառում են բազմաթիվ չգործող կազմակերպություններ: Ինչպես նախորդ տարիներին՝ գրանցված արհմիությունների թիվը 225 է, թեև մինչև 2017 թվականի օրենսդրական փոփոխությունները նրանք չէին համարվում օրինական մարմիններ: Արհմիությունները պետք է փոփոխեն իրենց կանոնադրությունը և վերագրանցվեն որպես հիմնադրամներ կամ հասարակական կազմակերպություններ, սակայն գործընթացը դադարեցվել է հիմնականում օրենսդրական կիրարկման բացակայության պատճառով:

Լեռնային Ղարաբաղում գրանցված էր մոտ 250 ԶՀԿ: Փորձագետների գնահատմամբ՝ նրանց 20 տոկոսից պակասն էր ակտիվ: Գործող ԶՀԿ-ները հիմնականում զբաղվում էին բարեգործությամբ, մարդասիրական և սոցիալական աջակցությամբ: 2022 թվականին նրանք հատկապես կենտրոնացած էին շրջափակման հետևանքով առաջացած մարտահրավերներին արձագանքելու վրա: Տարվա ընթացքում ԶՀԿ-ների ներկայացուցիչները հանդիպումներ են ունենում Լեռնային Ղարաբաղի նախագահի հետ՝ քննարկելու հրատապ հարցեր: Քսաներեք կազմակերպություններ Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ կազմում են զեկույց՝ մանրամասնելով շրջափակման հետևանքով մարդու իրավունքների լայնածավալ, համակարգված խախտումները: Չեկույցն ուղարկվելու էր միջազգային կազմակերպություններին և իրավապաշտպան խմբերին՝ որպես ճգնաժամի վերաբերյալ անկախ հաշվետվություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ: 3.6



2022 թվականին ԶՀԿ ոլորտը կարգավորող իրավական միջավայրը մնում է անփոփոխ:

Սահմանադրությունը երաշխավորում է միավորումներ ձևավորելու ազատությունը: Առկա են սահմանափակումներ միայն պետական անվտանգությանը, հասարակական կարգին, առողջությանը և բարոյականությանը, այլոց իրավունքներին ու ազատություններին վերաբերող դեպքերում: Օրենսդրական դաշտը հնարավորություն է տալիս գրանցել երկու տեսակի կազմակերպություններ՝ անդամության վրա հիմնված հասարակական կազմակերպություններ, որոնք կարգավորվում են

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով, և անդամության վրա չհիմնված հիմնադրամներ, որոնք կարգավորվում են «Հիմնադրամների մասին» օրենքով: Հասարակական կազմակերպությունները կարող են ստեղծվել մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, թեև քաղաքական կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները և արհմիությունները չեն կարող լինել հիմնադիր կամ անդամ: Հիմնադրամները կարող են ստեղծվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից՝ առանց բնակության վայրի, ազգության կամ քաղաքացիության սահմանափակման: Դատավորներին չի թույլատրվում ղեկավարել ոչ առևտրային կազմակերպություններ:

ԸՅԿ-ների գրանցման համար պատասխանատու է Արդարադատության նախարարությանն առընթեր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը: Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների գրանցման գործընթացն ընդհանուր առմամբ պարզ է և բաղկացած է հիմնականում իրավական համապատասխանության ստուգումից: Սովորաբար կազմակերպություններին խորհուրդ է տրվում իրենց կանոնադրությունները համապատասխանեցնել գործակալության կողմից տրամադրված ձևանմուշին՝ ավելի արագ գրանցման համար: Գրանցման դիմած որոշ խմբեր դժգոհում են, որ ձևանմուշը ճկուն և հարմար չէ: Գրանցման գործընթացը սովորաբար տևում է մինչև տասն աշխատանքային օր և արժե մոտ 27 ԱՄՆ դոլար: ԸՅԿ-ներն առցանց գրանցման հնարավորություն դեռևս չունեն: (Ի հակադրություն, բիզնեսները կարող են անվճար գրանցվել առցանց, սովորաբար երկու օրվա ընթացքում:) Անհատները, կազմակերպությունները և քաղաքացիական նախաձեռնությունները կարող են ազատորեն համագործակցել առանց պաշտոնական գրանցման: Առցանց ասոցիացիաներ կազմելու մասով սահմանափակումներ չկան:

2022 թվականին ԸՅԿ-ների հարկադիր լուծարման դեպքեր չեն գրանցվել: Տասնչորս կազմակերպություններ ինքնակամ լուծարվել են: Բազմաթիվ ոչ ակտիվ ԸՅԿ-ներ նախընտրում են չլուծարվել՝ գործընթացի հետ կապված ծախսերի և բյուրոկրատիայի պատճառով:

2021 թվականի մայիսին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները պարտավոր են իրենց գործունեության և բյուջեի վերաբերյալ տարեկան հաշվետվությունները ներկայացնել Պետական եկամուտների կոմիտե: Վերջինս հաշվետվությունները հրապարակում է իր կայքում: ԸՅԿ-ները հաշվետվության պահանջներն ընդհանուր առմամբ համարում են պարզ, թեև բողոքում են Պետական եկամուտների կոմիտեի կայքի սահմանափակումներից: Հիմնադրամները պարտավոր են ներկայացնել տարեկան առևտրի հաշվետվություններ, եթե հաշվետու տարվա վերջում իրենց ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը (մոտ 25,000 ԱՄՆ դոլար): Հասարակական կազմակերպությունները պարտավոր են ներկայացնել առևտրի հաշվետվություններ, եթե հաշվետու տարվա ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել են ավելի քան 10 միլիոն ՀՀ դրամ (մոտ 25,000 ԱՄՆ դոլար): Հաշվետվության պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել օրենքով սահմանված տույժերի: Ըստ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն»-ի «ԸՅԿ չափիչ» գեկույցի՝ 2022 թվականի հունվարից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում կիրառվել են մոտ 50,000 ՀՀ դրամի (մոտ 125 ԱՄՆ դոլար) տուգանքներ քսանվեց հասարակական կազմակերպությունների ու երեք հիմնադրամների նկատմամբ՝ սահմանված ժամկետում հաշվետվության պարտավորությունները չկատարելու համար: Վեց հասարակական կազմակերպություններ և մեկ հիմնադրամ ստացել են լրացուցիչ տուգանքներ՝ մոտ 200,000 ՀՀ դրամ (մոտ 500 ԱՄՆ դոլար) նախնական տույժից հետո հաշվետվությունները չհրապարակելու համար: 2022 թվականին ոչ մի ԸՅԿ չի սանկցիավորվել՝ կանոնադրությանը հակասող գործունեություն ծավալելու համար:

2022 թվականին արձանագրվել են իրավապահ մարմինների կողմից հավաքների կազմակերպման ազատությունը սահմանափակող մի շարք դեպքեր: Օրինակ, իշխանություններն անհամաչափ ուժ են կիրառում մայիս և հունիս ամիսներին ընդդիմության բողոքի ակցիաների ժամանակ: Օգոստոսին Երևանի ոստիկանությունն առանց բացատրության կարճ ժամանակով բերման է ենթարկում մոտ քսան անձանց, ովքեր հանդես էին գալիս Էին Ուկրաինայում Ռուսաստանի վարած պատերազմի դեմ: Սեպտեմբերին ոստիկանությունն արգելում է բողոքի ցույցը Ռուսաստանի դեսպանատան դիմաց և կարճ ժամանակով բերման ենթարկում երկու ակտիվիստի: 2022 թվականին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն զեկուցում է լրագրողների նկատմամբ բռնության աճի մասին և

արձանագրում քսանվեց միջադեպ՝ տասներեք զոհերով, որոնց հեղինակները եղել են ինչպես պետական պաշտոնյաներ, այնպես էլ մասնավոր անձինք: Սեպտեմբերին երեսունհինգ ԶՅԿ-ներ հանդես են գալիս երկրի ոստիկանապետին պաշտոնանկ անելու համատեղ կոչով՝ մտահոգություն հայտնելով Եռաբլուր զինվորական պանթեոնում ուժի անհամաչափ կիրառման և զոհված զինծառայողների հարազատների ապօրինի կալանավորման միջադեպի առնչությամբ:

2021 թվականի հուլիսին եզրի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանին մեղադրանք է առաջադրվում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հրահրելու համար՝ հիմնվելով Իրաքում լրագրողի հասցեին արված մեկնաբանությունների վրա, որոնցում նա մտահոգություն էր հայտնել Զայաստանում եզրի համայնքի նկատմամբ վերաբերմունքի հետ կապված: Սուլթանյանի դեմ դատավարության գործընթացը դադարեցվում է հոկտեմբերին՝ այն բանից հետո, երբ դատարանը որոշեց, որ հուլիսին նա լքել էր երկիրը: Այնուհետև դատարանը նրան կալանավորելու որոշում կայացնում: Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները քննադատում են մեղադրող կողմին՝ Սուլթանյանի խոսքերը համարելով պաշտպանողական և դատական գործը դիտարկելով որպես սպառնալիք ժողովրդավարությանը:

ԶՅԿ-ները կարող են միջոցներ հայթայթել օտարերկրյա դոնորներից, մասնակցել դրամահավաք արշավների և մատուցել վճարովի ապրանքների ու ծառայությունների: Նրանք նաև կարող են մասնակցել պետական մրցույթների, թեև դրան խոչընդոտում է պահանջը, ըստ որի՝ հասարակական կազմակերպությունները, ի տարբերություն բիզնեսների, պարտավոր են ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, եթե պետական բյուջեից տարեկան եկամուտը գերազանցում է 10 միլիոն ԶԶ դրամը (մոտ 25,000 ԱՄՆ դոլար): Նշված արժեքներից ստացված ցանկացած եկամուտ պետք է օգտագործվի բացառապես կազմակերպության կանոնադրության մեջ նշված նպատակների համար:

Սոցիալական ձեռնարկությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտ չկա: Փոխարենը, սոցիալական ձեռնարկությունները գործում են տարբեր իրավական ձևակերպումներով՝ անհատ ձեռներեցներ, ՍՊԸ-ներ, ԶՅԿ-ներ, հիմնադրամներ և կոոպերատիվներ: Որոշ սոցիալական ձեռնարկություններ գործում են որպես ԶՅԿ-ների կողմից իրականացվող նախագծեր: 2022 թվականին Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի մասով առաջընթաց չի գրանցվում:

Հարկային օրենքներն ավելի ձեռնտու են բիզնեսների, քան ԶՅԿ-ների համար: Ի տարբերություն բիզնեսների՝ ԶՅԿ-ները չեն կարողանում օգտվել հարկման այնպիսի պարզեցված սխեմաներից, ինչպիսիք են շրջանառության կամ միկրոձեռնարկությունների համար նախատեսված հարկատեսակները: ԶՅԿ-ներին արվող նվիրատվությունները խրախուսելուն ուղղված հարկաբյուջետային խթանները սահմանափակ են: Թեև առևտրային կազմակերպությունները կարող են իրենց համախառն տարեկան եկամուտի մինչև 0,25 տոկոսը տրամադրել իրավասու ԶՅԿ-ներին նվիրատվությանը, անհատ դոնորները ենթակա չեն հարկերի չափի նվազեցումների: ԶՅԿ-ների շրջանում իրականացվող հարկային ստուգումները բիզնեսների հետ համեմատ ավելի քիչ են:

Զաղաքացիական հասարակության ոլորտում իրավաբանական ծառայությունների նկատմամբ առկա ցածր պահանջարկի պատճառով ԶՅԿ-ներին առնչվող օրենսդրությունն իրավաբանների համար գրավիչ չէ, և ոլորտում մասնագետների թիվը սահմանափակ է: Այնուամենայնիվ, ԶՅԿ-ներին հասանելի է Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ), Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոնի (ԹԻՀԿ), Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի, «ՀԿ Կենտրոն»-ի (ՀԿԿ), Եվրասիական համագործակցության հիմնադրամի (ԵՀՀ) և այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող իրավական խորհրդատվությունը: Հեռավար աշխատանքի տարածմամբ պայմանավորված՝ իրավական ծառայությունները ԶՅԿ-ների համար ավելի հասանելի են դարձել ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 3.2

ORGANIZATIONAL CAPACITY IN ARMENIA



2022 թվականին ԶՀԿ-ների կազմակերպական կարողությունները հիմնականում մնում են կայուն՝ որոշակի առաջընթացով:

Մինչ հայ-ադրբեջանական սահմանում լարվածությունը պահպանվում էր, ԶՀԿ-ներն իրենց ջանքերը կենտրոնացնում են համայնքներում մարդասիրական օգնություն հասցնելու վրա: Սեպտեմբերյան բախումների արդյունքում բազմաթիվ մարդկանց տարհանումից հետո մի շարք ԶՀԿ-ներ իրենց ջանքերն ուղղում են սահմանամերձ համայնքներից բնակիչներին անվտանգ վայրեր տեղափոխելու վրա՝ ժողովրդավարությանը, կոռուպցիային, մարդու իրավունքներին և

կառավարության հաշվետվողականությանը վերաբերող խնդիրների փոխարեն: Սա ընդլայնում է ԶՀԿ-ների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու մասնավոր ընկերությունների հետ՝ բարելավելով նրանց կառավարման կարողությունները:


Չնայած ԶՀԿ-ները մշակում են ռազմավարական ծրագրեր դոնորների պահանջներին համապատասխանելու համար, նրանք հաճախ գործնականում չեն հետևում այդ ծրագրերին: Սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող ԶՀԿ-ները բարելավել են թիրախային լսարանների նույնականացման և ռազմավարական մոդելների մշակման իրենց կարողությունները՝ ապրանքների ու ծառայությունների սպառումը խթանելու և եկամտի աղբյուրները դիվերսիֆիկացնելու նպատակով:

2022 թվականին հայաստանյան ԶՀԿ-ները շարունակում են բարելավել մարդկային ռեսուրսների կառավարման, պլանավորման գնումների կազմակերպչական ընթացակարգերի մշակման ու իրականացման կարողությունները: Խոշոր ԶՀԿ-ները ներքին կառավարման համար սահմանում են քաղաքականություն, ընթացակարգեր ու համակարգեր և սովորաբար հետևում դրանց: Փոքր և մարզային ԶՀԿ-ները հաճախ չունեն հստակ սահմանված կազմակերպական կառուցվածքներ և դրանք զարգացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ, քանի որ ունեն կազմակերպական զարգացման ֆինանսավորման հետ կապված դժվարություններ: Մի քանի խոշոր ԶՀԿ-ներ են կարող իրենց թույլ տալ ունենալ մշտական աշխատակազմ: ԶՀԿ-ների մեծամասնությունը արտապատվիրում է այնպիսի մասնագիտական ծառայություններ, ինչպիսիք են հաշվապահությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և մարքեթինգը:

2022 թվականին հատկապես մարզերում գործող ԶՀԿ-ները նկատելի հաջողություններ են գրանցում կամավորների ներգրավման գործում: Օրինակ, «Ռեստարտ Վանաձոր» ՀԿ-ն ակտիվորեն ներգրավում է տեղացի կամավորների՝ նախագծերի կառավարման և լրատվամիջոցների հետ կապված աշխատանքներում: Կամավորության հայեցակարգն ավելի լայն տարածում է գտնում երիտասարդների շրջանում, քանի որ նրանք գիտակցում են դրա ներուժն իրենց կարիերայի հնարավորությունների տեսանկյունից: 2022 թվականի ընթացքում Գյումրիում գործող «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն հաջողությամբ հիմնում է երեք Երիտասարդական տուն Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերում՝ ի հավելումն արդեն գործող կենտրոններին Շիրակի և Լոռու մարզերում: Այս հաստատությունները տեղի երիտասարդների համար ստեղծում են հարթակ՝ կամավորության հիմունքներով աշխատելու և համայնքաշինական նախաձեռնություններում ներգրավվելու համար: 2022 թվականին՝ ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո, Հայաստանում հաստատված ռուս միգրանտները զգալիորեն նպաստում են կամավորության աճին՝ նախաձեռնելով ու մասնակցելով տարբեր կամավորական նախաձեռնությունների, մասնավորապես՝ բնապահպանական ուղղվածությամբ: Նրանք ձևավորում են կամավորների խմբեր՝ Դիլիջանի, Էջմիածնի ու Երևանի համայնքային այգիների, ջրամբարների, կիրճերի և ճանապարհների մաքրման նպատակով:

2022 թվականի ընթացքում ԶՅԿ-ները շարունակում են և զարգացնել տեխնիկական հմտությունները և արդյունավետ կերպով օգտագործել թվային տեխնոլոգիաները: Հայաստանում մատչելի ինտերնետ ծառայությունները լայնորեն հասանելի են: Շատ ԶՅԿ-ներ ակտիվ են տարածված սոցիալական մեդիա հարթակներում՝ Facebook-ում, YouTube-ում, Instagram-ում և Telegram-ում: 2022 թվականի ընթացքում ԶՅԿ-ների կողմից այդ հարթակների օգտագործումն ընդլայնվում է: Մարզային ԶՅԿ-ները՝ մասնավորապես երիտասարդական նախաձեռնությունները, շարունակում են օգտվել տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած անվճար գրասենյակային տարածքներից: Հայաստանյան ԶՅԿ-ների համար կիբեռանվտանգության՝ որպես առաջնահերթության սահմանումը դեռևս մնում է խնդրահարույց:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ: 5.0



ԶՅԿ-ների ֆինանսական կենսունակությունը, որը Հայաստանում երկար ժամանակ կայունության ամենաթույլ ցուցանիշով չափումն էր, 2022 թվականին մնում է անփոփոխ:

2022 թվականին օտարերկրյա դոնորների ֆինանսավորման մակարդակը հիմնականում կայուն էր: ԶՅԿ-ներին աջակցող հիմնական օտարերկրյա դոնորներն են՝ Եվրոպական Միությունը (ԵՄ), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄՉԳ) և Սևծովյան տարածաշրջանային համագործակցության հիմնադրամը: Տարվա ընթացքում իրականացված ծրագրերից են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Ուժեղ ԶՅԿ-ները և տեղական

գործընկերությունները հաշվետու համայնքների և ներառական սոցիալական պաշտպանության համար Հայաստանում» (2021–2024 թթ.), «Բաղաքացիական հասարակության դիմացկունություն և կայունություն» (2020–2024 թթ.) և Արևելյան գործընկերության «Բաղաքացիական հասարակության հնարավորություններ» (2021–2024) ծրագրերը:

2022 թվականին «Բառևարձակարձ Ինթերնեշնլ»-ը մեկնարկում է ԱՄՆ ՄՉԳ-ի կողմից ֆինանսավորվող «Բաղաքացիական հասարակությունը գործողության մեջ» ծրագիրը, որի նպատակն է բարելավել ԶՅԿ-ների ֆինանսական կենսունակությունը, բարձրացնել համայնքահեն կազմակերպությունների կազմակերպչական կարողությունները, խթանել ԶՅԿ-կառավարություն երկխոսությունը հանրային քաղաքականության շուրջ և ուժեղացնել համայնքահեն զարգացումը: Ավելի փոքր չափի դրամաշնորհներ են տրամադրվել Շվեդիայի, Հունգարիայի և Գերմանիայի կառավարությունների, ԱՄՆ-ի, Չեխիայի և Ճապոնիայի դեսպանատների, ինչպես նաև գերմանական Robert Bosch Stiftung, Friedrich-Ebert-Stiftung և Heinrich Böll Stiftung հիմնադրամների կողմից: 2022 թվականի վերջին Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը հայտարարում է, որ դառնում է լիովին անկախ և դադարեցնում իր անդամակցությունը Բաց հասարակության հիմնադրամների համաշխարհային ցանցին: Նոր ձևավորված ԶՅԿ-ն՝ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, սկսում է գործել 2023 թվականի մարտին՝ Ժողովրդավարության, անվտանգության և մարդու իրավունքների առաջխաղացման առաքելությամբ: Այն գործառնական բնույթի հիմնադրամ է և այլ ԶՅԿ-ներին դրամաշնորհներ չի տրամադրելու:

Երևանի ու մարզերի ԶՅԿ-ներն ավելի ակտիվ են համագործակցում ֆինանսավորման համար դիմելու և ծրագրեր իրականացնելու նպատակով: Օրինակ, Երևանում գործող «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը մի շարք մարզային ԶՅԿ-ների՝ «Հայկական Կարիտաս» ՀԿ-ի, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնի և «ՀԿ Կենտրոն»-ի հետ համատեղ ձևավորել է կոնսորցիում՝ դիմելու ԱՄՆ ՄՉԳ-ի կողմից

Ֆինանսավորվող «CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագրին: Վերջինիս նպատակն է բարձրացնել Ախուրյան համայնքի կարողություններն ու դիմացկունությունը՝ համայնքային զարգացման կառավարման նպատակով: Խոշոր կազմակերպությունները հաճախ ենթադրամաշնորհներ են տրամադրում ավելի փոքր կազմակերպություններին, իսկ մարզային ԶՅԿ-ները վերջին տարիներին ավելի շատ ենթադրամաշնորհներ են ստանում կայացած տեղական կազմակերպություններից: Օրինակ, Սոցիալական աշխատողների ասոցիացիան ենթադրամաշնորհներ է տրամադրել ինը տարածաշրջանային ԶՅԿ-ների՝ «Միասին հանուն սոցիալական համայնքների» ծրագրի շրջանակներում՝ ԵՄ-ի և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող: Նմանապես, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի» ծրագրի շրջանակներում Արմավիրի զարգացման կենտրոնը ենթադրամաշնորհներ է հատկացրել մարզային ԶՅԿ-ներին՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում աշխատանքային իրավունքների սովերային մոնիտորինգ իրականացնելու համար: Փոքր և նորաստեղծ ԶՅԿ-ները, թեև գնահատում են այս հնարավորությունները, սակայն մտահոգություն են հայտնում դոնորների ուղղակի ֆինանսավորման իրենց սահմանափակ հասանելիության վերաբերյալ՝ արձանագրելով, որ խոշոր ԶՅԿ-ները ստանում են դոնորների ֆինանսավորման մեծ մասը: Ավելի փոքր մարզային ԶՅԿ-ները կարծում են, որ կախվածությունը եկամտի նման աղբյուրներից սահմանափակում է իրենց գործունեության շրջանակը և ոչ միշտ է համահունչ իրենց հնարավորություններին, ինչը կարող է ազդել ծրագրի որակի վրա:

Տարբեր նախարարություններ շարունակում են ֆինանսավորում հատկացնել ԶՅԿ-ներին: Ընդհանուր առմամբ, պետական կառույցներն ավելի բարենպաստ և արձագանքող դիրքորոշում ունեն ծառայություններ մատուցող ԶՅԿ-ների հանդեպ՝ ի տարբերություն նրանց, որոնք կենտրոնացած են մարդու իրավունքների, դիտորդական կամ բնապահպանական նախաձեռնությունների վրա: Պետական ծառայողների մոտ դեռևս առկա են բացեր՝ տրամադրվող դրամաշնորհները վերահսկելու կարողությունների և հմտությունների մասով: 2022 թվականին «ՀԿ Կենտրոն»-ը ներգրավվում է հանրային լուսմներում՝ ուղղված ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի փոխարինմանը և կատարելագործմանը, որն ուներ թերի տեխնիկական և գործառական հնարավորություններ: Ֆինանսների նախարարությունը հաշվի է առնում հանրային լուսմների ընթացքում ԶՅԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի առաջարկները:

2022 թվականին կառավարությունը շարունակում է ԶՅԿ-ներին պատվիրակել սոցիալական ծառայություններ: Օրինակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պայմանագրեր է կնքում տեղական ԶՅԿ-ների հետ («Կանանց իրավունքների կենտրոն», «Ընտանիք առանց բռնության», «Երիտասարդ Տավուշ», «Թային Յուլս», «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն»)՝ ընտանեկան բռնության գոհերին հոգեբանական աջակցություն և ապաստան տրամադրելու նպատակով: ԶՅԿ-ներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը հիմնականում իրականացվում է մեկամյա դրամաշնորհների ձևով՝ դրամաշնորհ տրամադրող մարմնի տարեկան բյուջեից: ԶՅԿ-ները բախվում են մարտահրավերների ինչպես պայմանագրեր շահելու, այնպես էլ դրանց իրականացման ընթացքում, օրինակ, լինում են ֆինանսական փոխանցումների հետաձգումներ

Թեև տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով թույլատրվում է բյուջեի առանձին տողով ֆինանսավորում հատկացնել ԶՅԿ-ներին, նրանք հազվադեպ են այդպես վարվում: Նման կերպով իրականացվող ֆինանսավորումը սովորաբար օգնում է սոցիալական և երիտասարդական ուղղվածությամբ կազմակերպություններին՝ միանվագ միջոցառումներ՝ փառատոներ կամ մարդասիրական օգնություն, կազմակերպելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ ապավինում են այդ միջոցները հատկացնելու հայեցողական մեթոդներին: Տեղական մակարդակով բնաիրային աջակցությունը սովորաբար սահմանափակվում է համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում տարածքների տրամադրմամբ:

Հայաստանյան ԶՅԿ-ները ձգտում են ֆինանսական միջոցներ ներգրավել տարբեր ձևերով: Կազմակերպություններն ավելի հաճախ են օգտագործում առցանց հարթակներ և այլ էլեկտրոնային գործիքներ: ԶՅԿ-ների կողմից օգտագործվող քրաուդֆանդինգի հիմնական հարթակներից են ReArmenia-ն, Project Harmony-ն և Ayo!-ն: 2022 թվականին ReArmenia հարթակը միջոցներ է հավաքել նորարարական նախաձեռնություններին աջակցելու համար: Օրինակ, այն աջակցել է ծրագրերի, որոնք հասանելի են դարձրել ծրագրավորումը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի

դպրոցներում (օրինակ՝ MOONQ տեխնոլոգիաները բացվեց Լեռնային Ղարաբաղում), հնարավոր են դարձրել պատերազմում վիրավորվածների համար անվասայլակների պատրաստումը և արևային ջրատաքացուցիչներ տրամադրումը գյուղական համայնքներում: ԸՅԿ-ները նաև շարունակում են ինտեգրել «նվիրատվություններ» բաժին իրենց կայքերում՝ խրախուսելու համար առցանց նվիրատվությունները:


ԸՅԿ-ների կարողությունները ծառայությունների մատուցման և ապրանքների վաճառքի ու վարձակալության միջոցով եկամուտ ստեղծելու մասով սահմանափակ են: Դոնորները, ինչպիսիք են, օրինակ, ԵՄ-ն, աջակցում են հիմնականում նորաստեղծ սոցիալական ձեռնարկություններին: 2022 թվականին ավելի վաղ ստեղծված սոցիալական ձեռնարկություններն իրենց ծառայությունների շուկան համարում են անբարենպաստ և, արդյունքում, կախված մնում հիմնականում դոնորների ֆինանսավորումից:

2022 թվականին կորպորատիվ բարեգործության հնարավորությունները մնում են սահմանափակ: Կազմակերպությունների մեծ մասը նախընտրում է իրականացնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր՝ առանց ԸՅԿ-ներին ներգրավելու:

Կառավարության և դոնորների հաշվետվությունների պարտադիր պահանջները խրախուսում են ԸՅԿ-ներին պահպանել ֆինանսական կառավարման կայուն համակարգեր: ԸՅԿ-ները ենթարկվում են արտաքին աուդիտի, երբ այն պահանջվում է պետության կամ դոնոր կազմակերպության կողմից: Որպես կանոն՝ ԸՅԿ-ները ֆինանսական կառավարման և հաշվապահական ծառայություններն արտապատվիրում են: Փոխարժեքի տատանումներն Էական մարտահրավեր են ստեղծում ԸՅԿ-ների համար՝ ազդելով միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը պլանավորելու կարողության և ռեսուրսների օպտիմալ բաշխման վրա, ինչպես նաև սահմանափակելով նրանց գնողունակությունը:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: 3.0

2022 թվականին ԸՅԿ-ների կողմից իրականացվող շահերի պաշտպանությունը շարունակում է հետընթաց արձանագրել, քանի որ անկայուն քաղաքական և անվտանգային իրավիճակը կազմակերպություններին մղում է ինքնագրաքննության և խուսափելու կառավարությանը քննադատելուց: Մասնավորապես, ԸՅԿ-ները, որոնք կենտրոնացած են ժողովրդավարության, կոռուպցիայի, մարդու իրավունքների խախտումների և կառավարության թափանցիկության վրա, թուլացնում են շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը, սահմանափակվում միջազգային կազմակերպություններին ուղղված կոչերով կամ ուշադրությունը կենտրոնացնում հումանիտար խնդիրների վրա: ԸՅԿ-ների վերահսկողությունը կառավարության գործունեության նկատմամբ թուլանում է, քանի որ նրանք խուսափում են կառավարության հետ շահերի պաշտպանության ուղղակի գործողություններից: Ի տարբերություն նախորդ տարիների՝ վարչապետը ԸՅԿ-ների ներկայացուցիչների հետ հանդիպում չի ունենում: Հայաստանի միավորը V-Dem-ի՝ քաղաքացիական հասարակության մասնակցության ինդեքսում փոքր-ինչ նվազում է՝ 2021-ին գրանցված 0,71-ից հասնելով 0,7-ի՝ 2022-ին: Սա ցույց է տալիս Ե քաղաքականություն մշակողների կողմից ԸՅԿ-ների հետ խորհրդակցությունների անցկացման հաճախականության նվազում:



Նախարարությունների ենթակայության ներքո գործող հանրային խորհուրդները կոչված են ապահովելու ԸՅԿ-ների ներգրավումը կառավարության որոշումների կայացման գործընթացներում: Սակայն ԸՅԿ-ների մոտ հաճախ այն տպավորությունն է, որ հանրային խորհուրդները ֆորմալ

գործառնությունը դուրս որևէ այլ նպատակ չունեն: 2022 թվականի ընթացքում այս մարմինները հիմնականում պահվել էին: Հոկտեմբերի դրությամբ հանրային խորհուրդները հանդիպումներ են անցկացնում տասներկու նախարարություններից միայն վեցում, և այդ մարմիններից երեքը հանդիպում են ունենում միայն մեկ անգամ: Կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկում հանրային խորհուրդների գործունեության բարելավման ուղղությամբ: 2022 թվականի մայիսին, օրինակ, ընդունվում է Պետական կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, որը խորհուրդներին առաջարկում է բարեփոխումներ և այլ մեխանիզմներ՝ խթանելու ավելի ներառական ու թափանցիկ որոշումների կայացման գործընթացները:

Կառավարությունն օրինագծերի նախագծերը հրապարակում է հանրային քննարկման և մեկնաբանության համար՝ www.e-draft.am պորտալում: Այնուամենայնիվ, ԶԳ-ներն այս պորտալը չեն համարում շահերի պաշտպանության արդյունավետ գործիք, քանի որ այն չի ապահովում բովանդակային երկկողմանի հաղորդակցությունը: Ըստ մի շարք ԶԳ-ների՝ նույնիսկ պորտալի բաժանորդները նոր փաստաթղթերի տեղադրման վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցումներ չեն ստանում, իսկ մեկնաբանությունների ազդեցությունը շատ թույլ է: ԶԳ-ներն օգտագործում են նաև www.e-petition.am հարթակը՝ պետական, մարզային և տեղական իշխանությունների գործունեությանն առնչվող անհատական ու կոլեկտիվ խնդրագրեր ներկայացնելու համար: Այնուամենայնիվ, առկա է այս հարթակների մասին հանրային իրազեկվածության պակաս: Բացի այդ, հարթակ մուտք գործելը հնարավոր է նույնականացման քարտը սկանավորող հատուկ սարքի միջոցով: Քաղաքացիների մեծ մասն այս սարքից չունի, ինչը սահմանափակում է հարթակի օգտագործման հնարավորությունը:

Չնայած նշված մարտահրավերներին՝ 2022 թվականին ԶԳ-ները և կառավարությունն ունենում են մի շարք հաջողված համագործակցության դեպքեր: Օրինակ, ԶԳ-ները, այդ թվում՝ ԹԻՀԿ-ը, «ՀԿ-Կենտրոն»-ը, Արմավիրի զարգացման կենտրոնը և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը նշանակալի դեր ունեցան Բաց կառավարման գործընկերության՝ 2022-2024 թվականների գործողությունների նոր ծրագրի մշակման գործում: Նրանց տասը առաջարկություններից յոթը ներառվել են գործողությունների վերջնական ծրագրում: Դրանց նպատակն է Էլեկտրոնային գործիքների միջոցով խթանել մասնակցությունը: Դրանք թույլ կտան ապահովել ավելի արդյունավետ ու ընդգրկուն մասնակցություն պետական և համայնքային բյուջետային գործընթացներում՝ արդիականացնելով կառավարությունում հաղորդակցության ինստիտուցիոնալ համակարգը և վերացնելով բացերն ու ոչ հետևողական կամ խտրական մոտեցումները կառավարություն-ԶԳ հաղորդակցություններում:

2022 թվականին Հայաստանն ավարտում է «Պաշտոնական փաստաթղթերին մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման գործընթացը: Սա այս մակարդակի առաջին միջազգային փաստաթուղթն է, որտեղ պետությունները ոչ միայն ճանաչում են տեղեկատվություն ստանալու իրավունքը, այլև պարտավորվում են պաշտպանել և համագործակցել այդ իրավունքի ապահովման ուղղությամբ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն (ԻԱԿ) ակտիվ դեր ունեցավ կոնվենցիայի վավերացման ջատագովության գործում և ակտիվորեն ներգրավվելու է դրա իրականացմանն ուղղված մոնիտորինգի աշխատանքներում:

Ազգային անվտանգության ծառայությունը 2022 թվականի հուլիսին հրապարակում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագիծը, որը ներառում է նոր հայեցակարգ՝ «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն»: Այս տեսակի տեղեկատվությունը, թեև չի դասակարգվում որպես գաղտնի, սակայն դեռևս ենթակա է սահմանափակ տարածման՝ երկրի անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական ու տնտեսական շահերին կամ անհատների և կազմակերպությունների իրավունքներին ու շահերին վնասելու հնարավորության պատճառով: Մի շարք ԶԳ-ներ, այդ թվում՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը, ԹԻՀԿ-ն, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը քննադատում են առաջարկը՝ որպես տեղեկատվության ազատության անհարկի սահմանափակում: Չնայած կառավարությունը հաշվի է առնում օրենքի վերանայման վերաբերյալ ԶԳ-ների մի շարք առաջարկներ, խնդրահարույց դրույթները մնում են նախագծում, և այն 2022 թվականի նոյեմբերին կառավարության կողմից հաստատվում և ուղարկվում է Ազգային ժողով:

2022 թվականին ԶԶԿ-ները հաջողությամբ կիրառում են ռազմավարական դատավարությունը՝ խթանելու համար հանրային տեղեկատվության հասանելիությունը: Դատարանը բավարարում է

Ինֆորմացիայի Ազատության Կենտրոնի հայցն ընդդեմ յոթ համայնքների՝ համայնքապետարաններին պարտավորեցնելով հրապարակել պարտադիր հրապարակման եկթակա բոլոր տեղեկությունները՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին համապատասխան:

2022 թվականի ընթացքում ԶԶԿ-ները շարունակում են ջատագովությունը 2021 թվականին Ազգային Ժողովի կողմից ընդունված «Ծանր վիրավորանքի» մասին օրենքի դեմ: Այս օրենքը քրեականացնում է «Ծանր վիրավորանքը» և այլոց արժանապատվությունը «Ծայրահեղ անպարկեշտ ձևով» վիրավորելը՝ նման արարքի համար սահմանելով տուգանք 500,000 ՀՀ դրամի չափով (մոտ 1,250 ԱՄՆ դոլար):

Սահմանադրական դատարանը հաստատում է այս օրենքի սահմանադրականությունը: Այնուամենայնիվ, օրենքը զգալի քննադատության է արժանանում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փորձագետների ու մի շարք ԶԶԿ-ների՝ Մեդիա Նախաձեռնությունների կենտրոնի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, Լրագրողներ հանուն ապագայի, Լրագրողներ հանուն մարդու իրավունքների և Freedom House-ի կողմից, որոնք պնդում էին, որ այն սահմանափակում է խոսքի ազատությունը: Արդյունքում 2022 թվականի հունիսին կառավարությունը ապաքրեականացնում է Ծանր վիրավորանքը:

2022 թվականին ԶԶԿ-ները ակտիվորեն մասնակցում են ոստիկանության բարեփոխումների գործընթացում: Մասնավորապես, Իրազեկ քաղաքացիների միավորումը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և «Վարորդի ընկեր» ՀԿ-ն ներգրավվում են Ոստիկանության բարեփոխումների խորհրդում, որը ձևավորվել էր Իրազեկ քաղաքացիների միության Նախաձեռնությամբ: Խորհուրդն ընդունում է ԶԶԿ-ների կողմից արված մի շարք առաջարկներ, որոնք ներառում են Սևանա լճում ջրային ոստիկանության ստորաբաժանման ստեղծում, պարեկային ծառայության կրթական մոդուլների լրացում և activesociety.am կայքի բարելավում:

2022 թվականին բնապահպանական ԶԶԿ-ները շարունակում են զբաղվել շահերի պաշտպանությամբ: 2009 թվականին Հայաստանի կառավարությունը թույլտվություն է տալիս Լիդիան Արմենիա ՓԲԸ-ին՝ շահագործելու Ամուլսարի ոսկու հանքը: Սա հաջորդ տարիներին հանգեցնում է տեղաբնակների և ԶԶԿ-ների բողոքի ակցիաների: 2019 թվականին «Լիդիան Արմենիան» գրպարտության համար դատի է տալիս բնապահպան ակտիվիստ Թեմինե Ենոքյանին՝ պահանջելով 1,000,000 ՀՀ դրամ (մոտ 2,500 ԱՄՆ դոլար) փոխհատուցում՝ իր գործարար համբավին հասցված վնասի համար: 2022 թվականի հուլիսին Վերաքննիչ դատարանը Ենոքյանին պարտավորեցնում է հրապարակայնորեն հերքել իր հայտարարությունը և «Լիդիան Արմենիա»-ին վճարել 1,000,000 ՀՀ դրամ: Ենոքյանը բողոքարկում է այս որոշումը, սակայն 2022 թվականի դեկտեմբերին Վճռաբեկ դատարանն այն թողնում է անփոփոխ: Վաթսուներկու ԶԶԿ-ներ հրապարակում են հայտարարություն՝ արտահայտելով իրենց խորը մտահոգությունը երկրի դատական համակարգում բնապահպան ակտիվիստների նկատմամբ կիրառվող ճնշումների վերաբերյալ: Նրանք նշում են, որ Ենոքյանի դեմ դատավարությունը սպառնալիք է ժողովրդավարական արժեքների նկատմամբ՝ նպատակ ունենալով ոչ միայն լռեցնել Ենոքյանին, այլև հուսալքել մյուս ակտիվիստներին:

2022 թվականի դեկտեմբերի 15-ին հայաստանյան ԶԶԿ-ներից ձևավորված կոալիցիան դիմում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և հատուկ զեկուցողներին, Եվրոպայի խորհրդին և ԵՄ մարմիններին՝ կոչ անելով անհապաղ միջոցներ ձեռնարկել Լաչինի միջանցք շրջափակման հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամի ուղղությամբ:

ԶԶԿ-ները նաև ներգրավվում են Ազգային ժողովի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի հանրային քննարկմանը՝ կազմակերպված Միջազգային հանրապետական ինստիտուտի աջակցությամբ: Օրենքի հիմնական նպատակն է սահմանել միասնական իրավական հիմքեր կամավորության և կամավոր աշխատանքի համար:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ: 3.7

2022 թվականին ԶՅԿ-ների կողմից ծառայությունների մատուցումը մնում է անփոփոխ:

ԶՅԿ-ները շարունակում են իրենց շահառուներին տրամադրել ծառայությունների լայն շրջանակ՝ հումանիտար, սոցիալական, տնտեսական, առողջապահական, հոգեբանական, կրթական և մշակութային: ԶՅԿ-ները ցուցաբերում են ճկունություն և հարմարվողականություն և, ի պատասխան սահմանային բախումներին, դիվերսիֆիկացնում ծառայությունները՝ տուժած բնակչությանը տրամադրելով մարդասիրական օգնություն, սոցիալական և կրթական աջակցություն: Օրինակ, «Մարդը կարիքի մեջ» ՅԿ-ն, Արմավիրի գարգացման կենտրոնը և Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հակամարտության ընթացքում տրամադրում են մարդասիրական օգնություն և անցկացնում քաղաքացիական պաշտպանության և առաջին օգնության դասընթացներ:

2022 թվականին անկայուն անվտանգային իրավիճակը ԶՅԿ-ներին խրախուսում է ներգրավել նոր շահառուներին: Շատ կազմակերպություններ ընդլայնում են իրենց մանդատները՝ տեղահանվածների, հակամարտությունից տուժած ընտանիքների և այլ խոցելի խմբերի խնդիրների լուծման նպատակով: Որոշ կազմակերպություններ սկսում են օգտագործել տարբեր մարքեթինգային գործիքներ՝ շահառուներին հասնելու համար: Օրինակ, մի շարք ԶՅԿ-ներ արդյունավետ կերպով օգտագործում են թվային հարթակները, այդ թվում՝ սոցիալական մեդիան՝ թիրախային լսարանների հետ հաղորդակցվելու համար: Այլ կազմակերպությունները, ինչպիսիք են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, ԹԻՀԿ-ը, «Կրթություն և համերաշխություն» արհմիությունը և «Ֆակտոր տեղեկատվական կենտրոն» ՅԿ-ն, ակտիվորեն կազմակերպում և խթանում են դեմ առ դեմ քննարկումներ:



ԶՅԿ-ները պահպանում են ապրանքների և ծառայությունների մատուցման ժամանակ խտրականության բացառման սկզբունքը՝ սահմանված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով: Թեև անդամակցության վրա հիմնված ասոցիացիաները հիմնականում ծառայություններ են մատուցում իրենց անդամներին, որոշներն իրենց գործունեությունը տարածում են ավելի լայն լսարանների վրա: Օրինակ՝ Սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան, Կորպորատիվ կառավարման կենտրոնը, Փոքր և միջին ձեռնարկությունների ասոցիացիան և Առևտրաարդյունաբերական պալատն իրենց արտադրանքն ու ծառայությունները հասանելի են դարձնում բոլոր՝ ներառյալ անդամ չհանդիսացող

ձեռնարկություններին:

Մի շարք ԶՅԿ-ներ՝ «ՀԿ Կենտրոն»-ը, «Գործընկերություն և ուսուցում»-ը, «Կոմպասս» կենտրոնը, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը և Դիլիջանի երիտասարդական համագործակցության կենտրոնը, դիվերսիֆիկացրել են իրենց եկամուտների հոսքերը՝ առաջարկելով վճարովի վարձակալության ծառայություններ, խորհրդատվություն և հետազոտություն, շուկայի վերլուծություններ, սեմինարներ և փորձագիտական վերլուծություններ: Այնուամենայնիվ, առկա է փառատոների, ցուցահանդեսների, կոնֆերանսների և այլ միջոցառումների պակաս, որոնք կարող են նպաստել ԶՅԿ ապրանքների և ծառայությունների առաջխաղացմանն ու վաճառքին: Վերջին տարիներին մի շարք ԶՅԿ-ներ հիմնել են սոցիալական ձեռնարկություններ՝ եկամուտ ստանալու նպատակով: Այս նախաձեռնությունների զգալի մասը կախված է դոնորների ֆինանսավորումից ու դեռևս ինքնաբավ չէ:

Կառավարությունը գնահատում է ԶՅԿ-ների արժեքավոր ներդրումը սոցիալական ոլորտում՝ նրանց ծառայություններ արտապատվիրելով: 2022 թվականին ԶՅԿ-ները ծառայությունների մատուցման ավելի քան ինստուն պայմանագիր են կնքել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Օրինակ՝ «Առաքելություն Հայաստան»-ը, «Հայկական Կարիտաս»-ը, «ՍՕՍ-Մանկական


Գյուղերը» և «Լիարժեք կյանք»-ը պայմանագրեր են կնքել տարեց քաղաքացիներին և երեխաներին ինսամբ տրամադրելու համար:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾԸ: 3.0

2022 թվականին ԶԳԿ ոլորտին աջակցող ենթակառուցվածքներում փոփոխություններ չեն արձանագրվում:

2022 թվականին միջանկյալ աջակցող կազմակերպություններն ու ռեսուրս կենտրոնները, ինչպիսիք են ԵՀՀ-ն, ՀԿԿ-ն, Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ն, ԹԻՀԿ-ը, Ինֆոտուն (տեղեկատվական տուն) ցանցը, Արմավիրի զարգացման կենտրոնը և Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԱԼԱ) արժեքավոր օգնություն են տրամադրում ԶԳԿ-ներին: Այս կազմակերպություններն առաջարկում են կարողությունների զարգացման, ինչպես նաև փորձի փոխանակման տարբեր ծրագրեր՝ ԶԳԿ-ների և տեղական ակտիվ դերակատարների միջև համագործակցությունը խթանելու և ԶԳԿ-ների տեսանելիությունը բարձրացնելու նպատակով:

SECTORAL INFRASTRUCTURE IN ARMENIA



ՀԿ Դեպո պորտալը շարունակում է տրամադրել միասնական հարթակ՝ հայտարարությունների, նորությունների, դրամաշնորհային հնարավորությունների մասին տեղեկատվության և այլ ռեսուրսների համար: Միջանկյալ աջակցող կազմակերպություններն ու ռեսուրս կենտրոնները սովորաբար իրենց ծառայությունները տրամադրում են անվճար: Տեղական դրամաշնորհներ տրամադրող կազմակերպություններից են ԵՀՀ-ն, Հայաստանում Կանանց հիմնադրամը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը, Արմավիրի զարգացման կենտրոնը և «ՀԿ Կենտրոն»-ը: Բացառությամբ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի՝ այս կազմակերպությունների կողմից դրամաշնորհներ տրամադրումը կախված է միջազգային կազմակերպությունների ֆինանսավորումից:

ԶԳԿ-ները հաճախ կազմում են կոնսորցիումներ՝ գիտակցելով նման համագործակցության առավելություններն ու արդյունավետությունը բարդ մարտահրավերներին դիմակայելիս: Մի շարք դինամիկ կոալիցիաներ Էապես ազդում են իրենց ոլորտներում ընդհանուր իրավիճակի վրա: Նման գործընկերությունները ներառում են, օրինակ, Կանանց նկատմամբ բռնության դադարեցման կոալիցիան (տաս ԶԳԿ-ներ ներառող կազմակերպություն) և Հայաստանի ԶԳԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (բաղկացած ավելի քան յոթանասուն ԶԳԿ-ներից): Այնուամենայնիվ, տարբեր ոլորտներում գործող ԶԳԿ-ների միջև համագործակցությունը մնում է սահմանափակ:

2022 թվականին Երևանի և մարզերի ԶԳԿ-ները շարունակում են օգտվել կարողությունների զարգացման և վերապատրաստման ծրագրերից: Դոնորների, այդ թվում՝ ԵՄ-ի, ԱՄՆ ՄՁԳ-ի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) կողմից ֆինանսավորվող ծրագրերն առաջարկում են վերապատրաստման հնարավորություններ՝ ընդգրկելով թեմաների լայն շրջանակ՝ ռազմավարական կառավարում և հաղորդակցություն, մարդկային ռեսուրսների և ներքին կառավարում, ֆինանսական կայունություն, երիտասարդների ձեռներեցություն, շահերի պաշտպանություն և կանանց հզորացում: Դասընթացներն անցկացվում են ինչպես առցանց, այնպես էլ դեմ առ դեմ:

ԶԳԿ-ների և կառավարության միջև համագործակցությունը դեռևս ինստիտուցիոնալացված չէ, և չկան այդ գործընկերությունն ուղղորդող հաստատված ռազմավարական ծրագրեր: Այնուամենայնիվ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ամուր կապ է պահպանում սոցիալական ծառայությունների մատուցող ԶԳԿ-ների հետ, իսկ Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը համագործակցում է տարբեր ԶԳԿ-ների շահագրգիռ կողմերի հետ: ԶԳԿ-ների ներգրավվածությունը գործարարների հետ սահմանային


լարվածության ժամանակ նպաստում է երկու ոլորտների միջև համագործակցության ընդլայնմանը:

Ընդհանուր առմամբ, սակայն, ԶՅԿ-ների և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը մնում է սահմանափակ, քանի որ բիզնեսները սովորաբար նախընտրում են իրականացնել բարեգործական նախաձեռնություններ առանց ԶՅԿ-ներին ներգրավելու:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵՐՊԱՐ: 3.7

2022 թվականին ԶՅԿ-ների հանրային կերպարի վրա ազդում են ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումներ, ինչը հանգեցնում է ընդհանուր փոքր տեղաշարժի:

Հանրային քննարկումներում, մասնավորապես՝ առցանց մեդիա հարթակներում, ԶՅԿ-ների ներկայացուցիչների ներգրավվածությունը գնալով աճում է: Այնուամենայնիվ, եթե ԶՅԿ-ների գործունեությունը չի հատվում միջազգային կազմակերպությունների կամ պետական կառույցների գործունեության հետ, նրանք հիմնականում լուսաբանում կամ քննարկման հարթակ են ստանում միայն համախոհ լրատվական աղբյուրներից՝ 1in.am, Aravot.am, Lragir.am, Factor TV, A1+, medialab.am, «Յոթված 3» ակումբ (ղեկավարվում է «Հանուն հավասար իրավունքների» կողմից, «Մեդիա կենտրոն») (ղեկավարվում է Հանրային լրագրության ակումբի կողմից), Infocom տեղեկատվական պորտալ: Այս լրատվականներում լուսաբանումը դեռևս ունի բովանդակային վերլուծության և խորության խնդիր: Մի շարք լրատվամիջոցներ ԶՅԿ-ներին հիմնականում լուսաբանում են բացասական լույսի ներքո: Դրանց թվում են Երկիր Մեդիան, Արմայուզը, Հրապարակը, 5-րդ ալիքը:



Հանրային ընկալումների վրա բարենպաստ են ազդում ԶՅԿ-ների ջանքերն՝ ուղղված մարդասիրական օգնություն տրամադրելուն և 2022 թվականին սահմանային հակամարտությունից տուժած խմբերի հրատապ կարիքները բավարարելուն: Մի շարք ԶՅԿ-ների և քաղաքացիական նախաձեռնությունների («Մարդը կարիքի մեջ», «Սյունիքի կանանց ռեսուրս կենտրոնների ցանց», «Աշխատանք և հայրենիք» տարածքային զարգացման ՀԿ, «Ոմա») կողմից համայնքային մակարդակով իրականացված աշխատանքները, հատկապես սեպտեմբերից հետո, զգալիորեն նպաստում են ԶՅԿ-ների հանրային վարկանիշի բարելավմանը: Մարզերում ԶՅԿ-ների վերաբերյալ հանրային ընկալումները սովորաբար դրական են, քանի որ այնտեղ նրանց աշխատանքն ավելի տեսանելի է:

Ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ, հասարակությունը շարունակում է ԶՅԿ-ներին ասոցացնել իշխանությունների հետ և հաճախ կառավարության ձախողումները վերագրում է այդ ոլորտին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018-ի թավշյա հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության մի շարք ակտիվիստներ ստանձնում են պաշտոններ կառավարությունում, Ազգային ժողովում և այլ պետական կառույցներում: ԶՅԿ-ներն իրենք, մասնավորապես՝ բնապահպանական և մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունները, հետագայում նպաստում են այս ընկալումների տարածմանը: Բնապահպանական ԶՅԿ-ները, օրինակ, Ամուլսարի հանքավայրի՝ վերջին տարիներին ամենաշատ լուսաբանվող բնապահպանական թեմայի հետ կապված էական հաջողություններ չեն արձանագրում: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ԶՅԿ-ները պասիվ են խոսքի ազատության և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքելիս, հատկապես, երբ դրանք վերաբերում են ընդդիմության ներկայացուցիչներին: Նման կերպով ընկալվող անգործությունը, զուգորդվելով ԶՅԿ-ների ինքնագրաքննության հետ, հանրության շրջանում կասկածներ է առաջացնում ԶՅԿ-ների սկզբունքների և առաքելության վերաբերյալ:

Որոշ ԶՅԿ-ների միջև համագործակցության և բարձր մրցակցային հարաբերությունների բացակայությունը ևս նպաստում է բացասական հանրային ընկալումների ամրանդմանը:

ԶՅԿ-ներից շատերն ունեն հաղորդակցական ռազմավարություններ՝ ուղղված իրենց գործունեության թափանցիկության ապահովմանը: Այնուամենայնիվ, այս ռազմավարությունների իրականացումը հաճախ իրավիճակային բնույթ է կրում: Բազմաթիվ ԶՅԿ-ներ ակտիվ ներկայություն են ապահովում սոցիալական մեդիայում:

2021 թվականի մայիսին՝ ֆինանսական հաշվետվությունների նոր պահանջների ներդրումից հետո, ԶՅԿ-ներն ընդհանուր առմամբ բարելավում են թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ իրենց կայքերում հրապարակելով ֆինանսական հոսքերի վերաբերյալ հաշվետվություններ: Սա նպաստում է ԶՅԿ-ների գործունեության և գործառնությունների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը, թեև հրապարակված զեկույցների մեծ մասը բավականին ընդհանրական բնույթի է՝ ԶՅԿ-ների գործունեության և ֆինանսների մասին սահմանափակ մանրամասներով: Միայն համեմատաբար խոշոր ԶՅԿ-ներն են լրացուցիչ ջանքեր գործադրում թափանցիկություն ապահովելու համար՝ ընդունելով վարքագծի կանոններ և հրապարակելով օգտագործման տեսանկյունից հարմար ձևաչափով հաշվետվություններ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

1300 Փենսիլվանիայի պողոտա

Վաշինգտոն 20523

Հեռ: (202) 712-0000

Ֆաքս: (202) 216-3524

www.usaid.gov